





մար, հարկ է աւելի մանրամասնօրէն վերլուծենք Դրախտագիրքի աւանդածները, եւ դանազան առիթներով ըստածները իրարու հետ համեմատենք: Մասնաւորապէս պէտք է որոշակի դանազաններ անդրաչխարհի առաջին քաղաքին՝ գերեզմանի կամ հողվէրքի մասին ըստածները, միւս երկրորդ քաղաքին՝ կայանի մասին ըստածներին, որոնք յաճախ առանց խորութեան կը ներկայացունին, եւ կրնան իմաստի խորթութիւն պատճառել:

7. — Արդարեւ, խումբ մը կայ հողիներու, որոնք այժմ շատ կարեկցելի վիճակի մէջ են, աղօթքի եւ օթանդակութեան կարօտ. կը նմանին բանտարկեալներու, ծարաւ ու անօթի. կը տանջուին վիշապներէ, անքուն որդերէ եւ իրենց խակ խղճէն, ու կու լան դառնապէս. եւ թախանձաղին կը պաղատին՝ որ զիրենք ազատենք այդ անտանելի վիճակէն (ԺԴ. ԺԵ.):

8. — Երկրի քաղաքացիները կարող են աղօթքով, պատարագով եւ ուրիշ բարի գործերով օգնել այդ անճարակ հողիներուն: Արդարեւ, սուրբ պատարագի մատուցումով՝ լոյս կը ծագի հոն, ու շրնորհներ կ'իջնեն անոնց վրայ: Նմանապէս մեր բարի գործերը վը թեթեւցնեն անոնց տառապանքները (ԺԶ.):

9. — Ուրեմն, այդ տանջանքներէն ազատելու կարելիութիւն կայ, բայց իրենց ձեռքը չէ. օգնութեան կը կարօտին: Հետեւաբար, այդ կայանը ելքի դուռ մըն ալ ունի. մինչ հողվէրքը միայն մոռաքի դուռ ունէր:

10. — Միւս կողմէ, ողջերը բարի գործերով ու պատարագներով ո'չ միայն կ'ազատեն այդ հողիները, այլ իրենք ալ այդ տանջանքներէն զերծ կը մնան (ԺԴ.): Տառապող հողիները աղերսելով կը յանձնարարեն ողջերուն՝ որ չըլլայ թէ ասոնք ալ նոյն տեղը երթան ու տանջուին (ԺԴ. ԺԵ.):

11. — Եւ իրօք, այդ տանջանքներէն

ազատ եղողներ կան, սուրբերը, որոնք սպիտակ ու լուսաւոր զգեստներ հագած են, խաղաղութեան մէջ կ'ապրին, պայծառափայլ յարութեան յոյսով աւելցուն (ԺԵ.): Մարտիրոսները, ճշնաւորներն ու կոյսերը՝ լուսափայլ գահեր ունին այնտեղ (Ը.):

12. — Հետեւաբար, այդ կայանը՝ մեղքերու քաղութեան ժամանակաւոր տանջարան մըն է, ուրիշ կ'ապատին կամ կըրնան ազատիլ տանջուող հողիները՝ ողջերու օթանդակութեամբ: Աստուածաբանութեան արդի եղբայր՝ այդ կայանը սրտի կոչէինք քաւարան:

13. — Երբ հողին կ'անցնի անդրաշխարհի քաղաքը, հոն տեղի կ'ունենայ առաջին դասաւորում մը. անօրէններն ու չարերը ներս կը տարուին՝ չարչարուելու. իսկ սուրբերու առջեւ լոյս կը վառի (Դ.):

Արդ, ի՞նչպէս եւ որո՞ւ կարգադրութեամբ տեղի կ'ունենայ այս բաժանումը: Առաքել ուղղակի չի պատասխաներ մեր այս հարցումին. բայց տուած է արդէն լուծումի բանալին: Չէ՞ որ մահէն վերջ՝ մարդոց հողիները Աստուծոյ ձեռքին տակ են (ԺԵ.): Ուրեմն, դասակարգելու այդ բաժանումը տեղի կ'ունենայ Աստուծոյ կարգադրութեամբ: Հոս, աստուածաբանութեան արդի եղբայրանութեամբ՝ պիտի ըսենք թէ տեղի կ'ունենայ ծածուկ դատաստան մը, որու վճիռը իսկոյն կը գործադրուի:

14. — Ըստ Առաքելի, հողիները չեն գիտեր թէ որքան ատեն սրտի մնան կայանի մէջ. հետեւաբար կը սպասեն տիեզերական դատաստանին (ԺԸ.): Կը սարսափին յատկապէս դժոխքէն (ԺԹ.). եւ այս դարմանալի չէ, քանի որ արդիւնք է Դրախտագիրքի խրատաբարոյական ու բարաւանական բնոյթին: Առաքելի նպատակն է որ երկրաքաղաքացիները միշտ դատաստանի ու դժոխքի սարսափն ունենան. ասոր ալ բարանական օրինակը կու տան անդրաշխարհի հողիները՝ իբր խը-

րատ: Որով երկրաքաղաքացիները կը պարտին միշտ աղօթել անոնց համար:

15. — Դրախտագիրքի ամէնէն ցայտուն կէտը՝ ննջեցեալներու եւ ողջերու միջեւ դոյութիւն ունեցող անձուկ աղերսն է. մեղմէ՝ աղօթք, իսկ իրենց կողմէ՝ բարեխօսութիւն (Ժ.):

Առաքել յաճախ կը թուէ ննջեցեալներու հողիներուն ի նպաստ եղած օթանդակութեան դրդապատճառները, այդ օթանդակութեան բարեբար աղղեցութիւնը՝ անդրաշխարհի հողիներուն վրայ, եւ անկէ ծագած օղուտը՝ մեղի (ԺԱ. ԺԲ. ԺԳ. ԺԶ.): Երկարօրէն վը թուէ միջոցները՝ որով կարող ենք օգնել ննջեցեալներուն. աղօթք, պատարագ, նուիրատուութիւն, աղօթք, պատարագ, ժամուց, մատաղ, գերեզմանօրհնէք, ժամուց, խունկ, եւ բարեպաշտական ուրիշ գործեր (Ժ. ԺԳ. ԺԶ.), որոնք բոլորը ողորմութեան գործեր են՝ ի նպաստ ննջեցեալներուն:

16. — Ամէնէն կարեւոր յորդորը՝ զոր մեղի կու տան անդրաշխարհի բնակիչները՝ ապաշխարութեան յորդորն է: Առաքել կարեւոր է խոստովանանքը, որուն ապա՝ կարեւոր է խոստովանանքը, որուն ապահովութիւնը կը յեղիւղեն երկարօրէն. կու տան օգտաշատ խորհուրդներ՝ կատարեալ խոստովանանք մը կատարելու, չմեռած. այն է՝ յայտնելու մեր ծա-

ծուկ յանցանքները, չար մտածութիւնները, աչքի ու կամքի ներքին թերացումները, դատարկ խօսքերը, մարմնոյ մեղքերը. վերջապէս, չմնայ բան մը մեր սըրտին վրայ, որպէսզի մաքուր հողիով մըտնենք գերեզմանին որջը, եւ հոն չհոտինք. ու երբ մահուան ձմեռն անցնի՝ մաքուր մարմնով յարութիւն առնենք (Թ.):

Խոստովանելի մեղքերը թուարկած պահուն, չ'անտեսուիլ գողութեան պարագային՝ հատուցումի պարտականութիւնն ալ յիշեցնել:

17. — Հետաքրքրական կէտ մըն ալ՝ անդրաշխարհի քաղաքին մէջ Հայոց համար սահմանուած առանձին վայրն է, ամառաւոր, Յիսուսի արիւնով գնուած, ուր օտարներ չեն կրնար մտնել (Բ.):

Ահա՛, ուրեմն, Առաքել Սիւնեցիի դաւանական հայեցակէտը, ուր կը ներկայաւանդուի Սաթեւեան դպրոցի կնիքը՝ բանաստեղծական երկնաւորումով, խրատաբարոյական իր հանգամանքով. հետաքրքրական ու կարեւոր անով՝ որ կը ներկայացնէ հայ եկեղեցւոյ լոբոնուսները անդենական կեանքի մասին՝ ԺԴ. դարուն եւ ԺԵ. դարու սեմին:

(Շարունակելի)

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ